ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/24

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Ավագյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 44.110.947443)

Քննելով «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից 20.02.2019թ. ներկայացված և 21.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/24 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված թիվ «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման ձևով սննդամթերքի մատակարարման գնման ընթացակարգին: 30 հունվարի 2019թ. հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը հայտարարել է բոլոր մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, այդ թվում նաև «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի գնային առաջարկը, այնուհետև հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշել է հետևյալը.

Որպես հայտի մերժման փաստական հանգամանք, արձանագրության մեջ նշված է՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հրավերով սահմանված պահանջներին /1 բնօրինակ, 2 պատճեն/: Համաձայն՝ գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 4.3 կետի, հանձնաժողովը հայտը մերժեց»:

Ընկերությունը նշել է, որ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավորության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներով, մասնավորապես՝

Օրենի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Կարգի 41-րդ կետում նշվում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ամփոփելով վերագրյալը, Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի 30 հունվարի 2019թ. թիվ 2 արձանագրությամբ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի գնման հայտը անհիմն է մերժվել՝ չի տրվել անհամապատասխանությունը շտկելու Կարգով սահմանված հնարավորությունը:

Ընկերությունը ղեկավարվելով Օրենքի 46-48-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով խնրել է պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոխել 30.01.2019թ. հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետը՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ և հնարավորություն տալ սահմանված կարգով «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ին շտկելու հայտում առկա պատճենների քանակի վերաբերյալ անհամապատասխանությունը:

Ի լրումն վերոհիշյալ բողոքի Ընկերությունը 25.02.2019թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ ս/թ. փետրվարի 19-ին «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից gnumner.am կայքում հրապարակվել է հայտարարություն՝ «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին: Հայտարարության մեջ որպես գնման մասնակից ներկայացված է մեկ մասնակից, մինչդեռ հայտ են ներկայացրել 4 մասնակիցներ, այդ թվում «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն: Նշված հայտարարության մեջ բացակայում են նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 30-ի 265-Ա հրամանի 5-րդ հավելվածով սահմանված այլ վավերապայմաններ ևս, մասնավորապես բացակայում է Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ անգործության ժամկետը, ներկայացված չեն գնման առարկաները, չափաբաժինները, հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտերը, նրանց անհամապատասխանության համառոտ նկարագրությունները:

Ընկերությունը ներկայացված միջնորդությամբ խնդրել է կասեցնելու «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից պայմանագիր կնքելու որոշումը և պարտավորեցնել «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին հրապարակել՝ 2017թ. մայիսի 30-ի թիվ 260-Ա հրամանի 5-րդ հավելվածով սահմանված վավերապայմաններով պայմանագիր կնքելու մասին համապատասխան որոշում, սահմանելով նաև անգործության ժամկետ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.02.2019թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 22.02.2019թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հունվարի 30-ին ժամը 12:00-ին՝ «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել 4 կազմակերպություններ՝ «ՀԱՍՄԵՐ» ՍՊԸ, «ՍԻՄԲԱԲ» ՍՊԸ, «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն և «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն:

Հրավերով պահանջվող ճաստաթղթերի առկայությունը ստուգելիս միայն «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին (1 բնօրինակ, 2 պատճենի փոխարեն ներկայացվել է 1 բնօրինակ և 1 պատճեն):

Համաձայն՝ գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 4.3 կետի՝ հանձնաժողովի բոլոր 5 անդամներն էլ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտը մերժեցին: Նիստին ներկա մասնակիցները՝ «ՀԱՍՄԵՐ» ՍՊԸ-ի լիաղոր Քարամյան Կարեն Ղարիբի, «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ի տնօրեն Վարազդատ Հայրապետյանը նույնպես համաձայնվեցին հանձնաժողովի կայացրած որոշման հետ: «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է համաձայն հրավերի հրահանգի 4.3 կետի: Օրենքով սահմանված

կարգով փաստաթղթերը նույնությամբ վերադարձվել են«Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ին: Սակայն «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հրաժարվեց փաստաթղթերը հետ ընդունել, ինչի մասին կատարվեց համապատասխան գրանցում՝ արձանագրությունների գրանցամատյանում:

Քանի որ երկու չափաբաժիններով՝ թիվ 1 (հյութ) և թիվ 3 (թխվածքաբլիթ) հաղթեց «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն, իսկ թիվ 2 (վաֆլի) չափաբաժնով «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն և «ՀԱՍՄԵՐ» ՍՊԸ-ն ներկայացրել են նույն գնային առաջարկը, հանձնաժողովը որոշեց Օրենքով սահմանված կարգով, կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն՝ հայտարարել բանակցություններ այդ երկու կազմակերպությունների միջև: Բանակցությունները կայացան 2019թ. փետրվարի 6-ին ժամը 12:00-ին: Բանակցություններին չներկայացավ «ՀԱՍՄԵՐ» ՍՊԸ-ն, իսկ «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն առաջարկեց նոր ցածր գին, որը հանձնաժողովն ընդունեց միաձայն և կազմվեց համապատասխան արձանագրություն առ այն, որ Վարազդատ Հայրապետյանը հաղթող ճանաչվեց բոլոր երեք չափաբաժիններով: Վարազդատ Հայրապետյանի հետ 2019թ. փետրվարի 14-ին կնքվեց պայմանագիր»:

Ամփոփելով վերը նշվածը, Պատվիրատուն հայտնել է, որ «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.25 կետի համաձայն՝ նախատեսված պահանջները Պատվիրատուի կողմից չեն կատարվել զուտ տեխնիկական պատճառներով (համակարգչի անսարքություն):

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.02.2019թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ԱՄ-2019/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն:

2. Ընթացաարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 02 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են 1 բնօրինակից և 2 օրինակ պատճենից՝ բացառությամբ՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի (1 բնօրինակ և 1 պատճեն)

3. Նույն արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով հայտը պատրաստելու հրահանգի 4.3 կետը, մերժել է «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի 20.02.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 22.02.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի

համաձայն՝ նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը հաղորդում է տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

Նույն կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում անձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.2 ենթակետը սահմանում է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում

հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Նույն կետի 7.8 ենթակետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն կետի 7.9 ենթակետը սահմանում է, որ եթե սույն հրավերի 7.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով, «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 02 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են, բացառությամբ՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի՝ մասնավորապես վերջինիս կողմից 1 բնօրինակ, 2 պատճենի փոխարեն, ինչպես պահանջվում է հրավերով, ներկայացվել է 1 բնօրինակ և 1 պատճեն):

Նույն արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը մերժել է «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում անձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերը նշված նորմերի համաձայն՝ այն դեպքերում երբ մասնակցի հայտում արձանագրվում է անհամապատասխանություն, որը չի վերաբերում գնային առաջարկին կամ հայտի ապահովմանը, ապա մասնակցին տրվում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն, մինչդեռ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից սահմանված կարգով Ընկերությանը չի տրվել շտկելու հնարավորություն:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի 25.02.2019թ. ներկայացված միջնորդությանը, մասնավորապես՝ կասեցնելու «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից պայմանագիր կնքելու որոշումը և պարատվորեցնել «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին հրապարակել՝ 2017թ. մայիսի 30-ի թիվ 260-Ա հրամանի 5-րդ հավելվածով սահմանված վավերապայմաններով պայմանագիր կնքելու մասին համապատասխան որոշում՝ սահմանելով նաև անգործության ժամկետ, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Պատվիրատուն 22.02.2019թ. գրությամբ ներկայացրել է «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Վ. Հայրապետյանի և «Գետափի

միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի միջև ***14.02.2019թ.*** կնքված ապրանքների մատակարարման պայմանագիրը:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.25 կետով նախատեսված պահանջները Պատվիրատուի կողմից չեն կատարվել զուտ տեխնիկական պատճառներով (համակարգչի անսարքություն):

Միաժամանակ արձանագրում եմ, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում առկա տեղեկատվության համաձայն՝ «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով ընթացակարգի արդյունքում Պատվիրատուն պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակել է ***19.02.2019թ.,*** մինչդեռ՝

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.25 ենթակետի համաձայն՝ ***մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:*** Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

Նույն կետի 7.26 ենթակետի համաձայն՝ մինչև անգործության ժամկետը լրանալը կամ ***առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման

հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մինչև անգործության ժամկետը լրանալը կամ **առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն <u>առոչինչ է:</u>**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի համաձայն՝ ***անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման <u>գործարքն անվավեր է կնքելու պահից:</u>***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ ***օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է*** կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Պատվիրատուն տեղեկագրում նախքան պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունն հրապարակելը 14.02.2019թ. կնքել է պայմանագիր, հետևաբար վերը նշված իրավական կարգավորումներից ելնելով, գտնում եմ, որ Ա/Ձ Վ. Հայրապետյանի և «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի միջև ***<u>14.02.2019թ.</u>*** կնքված ապրանքների մատակարարման պայմանագիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն, առոչինչ է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից 20.02.2019թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝ պարտավորեցնել «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ 2019/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 18.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և ՀՀ

կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ին հնարավորություն տալ սահմանված կարգով շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ